ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՆԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Գ.Վաննան

26/06/2020թ

ՔԱՂՎԱԾՔ 3 ՆԻՍՏ ԹԻՎ 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաննան համայնքի ավագանու 2020թ-ի հունիսի 26-ին ժամը 11 00-ին կայացավ ավագանու հերթական նիստը:Նիստին մասնակցում էին 5 անդամներից 4-ը բացակայում էր ավագանու անդամ Էդվարդ Շաբոյանը նիստը վարում էր համայնքի ղեկավար Ի.Հարությունյանը արձանագրում էր քարտուղար ժ/պ Ա.Մելքոնյանը:

Օրակարգ

2020թ-ի բյուջեի քննարկում և հաստատում
ավագանու անդաներ
1 Յ.Գևորգյան
2 Գ.Գալստյան
3 Փ.Սարգսյան
4 Ս.Գրիգորյան

Մինչև օրակարգի հարցի քննարկումը զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար Ի.Հարությունյանը հստակ նշեց բյուջեի ընդունման կարևորությունը և ավագանուն ներկայացրեց առաջիկա իրականցվող ծրագրերի մասին,որից հետո հարց ու պատասխանի ընթացքում համայնքի ավագանին առաջարկեց,որ չի հաստատելու համայնքի 2020թ-ի բյուջեն պատճառաբանելով հետևյալը՝
Նիստի հարգելի մասնակիցներ մենք ստիպված ենք նորից անդրադառնալու անցյալին, որովհետև ամեն ինչ անգամ բյուջեի հաստատումը գալիս է անցյալից անցած օրինագիծը քննարկելիս մենք խոսեցինք Ի.Հարությունյանի գործերի մասին,որ նա այս ամիսների ընթացքում ոչ մի լավ բան չարեց ժողովրդի հույսերը արդարացնելու համար:Հարց է ծագում,որն է Ձեր համար կարևորը բյուջեի հաստատումը պարոն Հարությունյան թե Ձեր հաստատումը,չե որ այսօր Ձեր գործերը քննվում են դատարանում:Մենք ժողովրդի կողմից ընտրյալներս չենք կարող և իրավունք չունենք համայնքի բյուջեն վստահել մեկի ում հայրը բառիս բուն իմաստով 30 տարի շարունակ թալանել է մեր գյուղը:Մենք չենք կարող և իրավունք չունենք վստահել մի աշխատակազմի,որի անդամները 30 տարի շարունակ մասնակցել են այդ թալանին:

Մենք չենք կարող վստահել Ձեզ և Ձեր աշխատակիցներին,որովհետև Դուք Ձեր արածով ապացուցեցիք, որ ժողովրդի կողքին չեք և չեք էլ եղել երբևէ:Մեր հարուստ գյուղը Ձեր պատճառով ամայացավ:Մինչև այսօր ավագանին տեղյակ չե թե ինչ է կատարվում համայնքի բյուջեի հետ,որովհետև Դուք պարոն Հարությունյան նախկիների պես թաքցնում էք իրականությունը մեզանից և այսքանից հետո ուզում էք, որ մենք հաստատենք այն:Շատ բաներ կան դեռ ասելու բայց սա էլ բավական է ,որ մենք դեմ քվիարկենք Ձեր օրինած նախագիծը:Այսպիսով ելնելով վերոհիշյալից բոլոր հանգամանքներից մենք ավագանու 3 անդամներս, դեմ ենք քվիարկելու գյուղապետարանի կողմից ներկայացված նախագծին և չենք հաստատելու համայնքի բյուջեն:

Կողմ3 դեմ1 ձեռնապահ 0

ավագանու անդամներ

1 Յ.Գևորգյան

2 Գ.Գալստյան

3 Փ.Սարգսյան

4 Ս.Գրիգորյան

Նիստը արձանագրեց քարտուղարի ժ/պ Ա.Մելքոնյանը

Վաննաև համայնքի ղեկավար Ի.Հարությունյան